ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ

★

ԵՐԵՎԱՆ 1948

491.99-1(03)
Ղ

ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲՅԱՆ
(Ֆիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՀԱՅԵՐԵՆ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ

12188

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է Հայկական ՍՍՌ
Լուսավորության Մինիստրության կողմից

ԳՐՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1947

А 1991

Профессор, докт. филол. наук
АРАРАТ ГАРИБЯН

Новый орфографический словарь армянского языка

(2-ое издание)

Ереван—1947

ՍԻՐՈՎ

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ

ՍՈՎԵՏԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՍՈՎՈՐԴՂ

ՄԵՐՆԴԻՆ

ՀԱՅԿ. ՍՍՌ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Արդի հայերենի ուղղագրության մասնակի բարեփոխությունից հետո ուղղագրական երկու բառարաններով (համառոտ և ընդարձակ) հրատարակումը մեծապես նպաստից մեր հասարակության, հատկապես աշակերտության և ուսանողության, ուղղագրական հմտությունների կայունացմանն ու ամրապնդմանը։ Սակայն, առաջին հրատարակության սահմանափակ ելրաժը չբավարարեց այն պահանջը, որ զգացվում է թե՛ դպրոցում և թե՛ դպրոցից դուրս։ Ուստի ՀՍՍՌ Լուսավորության Մինիստրությունը, գիտենալով, որ ուղղագրական բառարանը խիստ անհրաժեշտ մի ձեռնարկ է յուրաքանչյուր քաղաք սյուռ համար, լույս է ընծայում պրոֆ. Ա. Ղաբիբյանի «Հայերենի ուղղագրական նոր բառարանի» 2-րդ հրատարակությունը։ Բառարանում գետեղված են բոլոր այն բառերը, որոնք ունեն ավանդական և քերականական գրություն, այլև այն բառերը, որոնց գրությունը խիստ տարբեր է բարբառային արտասանությունից։ Ընդարձակ կերպով տեղ են գտել բառարանում նաև այնպիսի բառեր, որոնք կապված են մեր կյանքի կուլտուրական, գիտական և տեխնիկական վերելքի հետ, որոնք արտահայտում են սովետական շինարարությունն ու կուլտուրան։ Լուսավորության Մինիստրությունը գտնում է, որ ուսուցչությունն առանձնապես հոգ պիտի տանի, որպեսզի ուղղագրական բառարան օգտագործելը դառնա աշակերտի կյանքի համառությունից մեկը, որ մեծապես կնպաստի սովորող սերնդի ուղղագրական գիտելիքների խորացմանը։

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

«Հայերենի ուղղագրական նոր բառարանի» բոլոր բառերի ուղղագրությունը քննության առնված և ընդունված է ՀՍՍՌ Լուսավորության Մինիստրության առընթեր Տերմինաբանական Կոմիսիայի կողմից։ Բառարանի հիմնական նպատակներից չշեղվելու համար բացատրված են միայն այն բառերը, որոնք, մեր կարծիքով, աշակերտի ակտիվ բառապաշարի մեջ անհրաժեշտ են և կամ որոնց համանիշն ավելի ընդունելի է։

«Հայերենի ուղղագրական նոր բառարանի» այս երկրորդ հրատարակության մեջ սկզբունքային որևէ փոփոխություն չի մտցված։

Ուղղված են առաջին հրատարակության վրիպակները։

Ավելացված է երկհատոր գրություն ունեցող մի քանի բառերի երկրորդ տեսակը. Բաբգեն-Բաբկեն, բեզ-բեկ, լաբերին-Թոս-լաբյուրինթոս, նոյան-Նոյյան։

Բառարանը հարստացված է շուրջ 1000 բառով։ Ուղղագրական կանոններին մեջ ավելացված են օտար բառերի տառադարձության և մեծատառի գործածության կանոնները։

Գործածության համար չհանձնարարվող բառերը տրված են աստղանիշով։

ՀԵՂԻՆԱԿ

ՀԱՅԵՐԵՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ԿԱՐԳԸ

Ընդունված է Հայկ. ՍՍՌ Լուսավորության Մինիստրության առընթեր Տերմինաբանական Կոմիտեի 1926 թ. հոկտեմբերի 5-ի նիստում

Ա ա	Բ բ	Գ գ	Դ դ	Ե ե	Զ զ	Է է
Ը ը	Թ թ	Ժ ժ	Ի ի	Լ լ	Խ խ	Ծ ծ
Կ կ	Հ հ	Ձ ձ	Ղ ղ	Ճ ճ	Մ մ	Յ յ
Ն ն	Շ շ	Ո ո	Չ չ	Պ պ	Ջ ջ	Ռ ռ
Ս ս	Վ վ	Տ տ	Ր ր	Ց ց	ՈՒ ու	Փ փ
Ք ք	Եվ և	Օ օ	Ֆ ֆ			

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր կուլտուրայի պատմության ընթացքում հայոց լեզվի ուղղագրությունը մի քանի անգամ փոփոխության է ենթարկվել։ Եվ այդ հասկանալի է, որովհետև հայերեն գրավոր լեզուն 1500 տարվա պատմություն ունի։ Հայերեն գրերը հնարված են 5-րդ դարում, այսինքն՝ 1500 տարի մեզանից առաջ, այդ պատճառով էլ այդքան երկար տարիների ընթացքում ուղղագրությունը մնալ չէր կարող։ Լեզուն փոփոխվող երևույթ է, հատկապես բանավոր լեզուն։ Լեզվի փոփոխությունը կապված է հասարակության պատմության հետ։ Մենուշն հասարակությունը միշտ անփոփոխ չի մնում։ Դրանի որ արտադրական կյանքը և հասարակական հարաբերությունները փոփոխվում են, փոփոխվում են և գնտական սիստեմները, փոփոխվում են ժողովրդական ոզջ կյանքը և ժողովուրդների պատմական կառուցվածքը։ Յուրաքանչյուր դասակարգային կառուցվածքը։ Յուրաքանչյուր դասընկանում գրական լեզուն օգտագործվում է տարբեր կամ տարբեր ծագում ունեցող հասարակական խավերի կողմից։ Յուրաքանչյուրը գրանցից խոսում է մենուշն լեզվի տարբեր տեսակներով։ Ամեն մի ժողովրդի լեզու միատարը չէ։ Մենուշն ժողովրդի գանազան հասվածները գանազան ձևով են խոսում։ Թեև մենուշն լեզվի գանազան տեսակները են գրանք, բայց միմյանցից երբեմն այնքան տարբեր, որ որոշ դեպքերում միմյանց անհասկանալի են։ Այսպես, օրինակ, տարբեր է խոսում մեզ մոտ գաբաղցին, տարբեր՝ լենինականցին, տարբեր՝ երևանցին և տարբեր՝ վանեցին։ Թեև գրանց բոլորի խոսվածքները էլ հայերեն են, բայց մենուշն հայերենը չեն, այլ հայերենի տարբեր տեսակները, բարբառները։ Բացի այս տարբերություններից, որ տեղա-

յին տարբերութիւններ են, լինում են նաև լեզվի սոցիալական տարբերութիւններ, այսինքն՝ հասարակական տարբեր խավերը միևնոյն լեզվի տարբեր տեսակներով են խոսում։ Օրինակ, մեր հայ ուսումնական մարդը, որտեղից էլ նա լինի, խոսում է հայերենի մի առանձին տեսակով, որ կոչվում է **գրական լեզու**։ Այսպես էլ արևմտահայ ուսումնական մարդը, միևնոյն է, թե որտեղացի լինի, ուսումնականների հետ խոսում է տարբեր տեսակի հայերենով, որ կոչվում է **արեւմտահայ գրական լեզու**։ Մինչդեռ արևմտահայ ժողովուրդը խոսում է հայերենի 24 տեսակ բարբառներով, որոնք ավելի կամ պակաս չափով տարբեր են գրական կոչված լեզվից։ Նույնը և մեզ մոտ։ Ուստի հայերեն լեզվի մեջ այժմ հենց, բացի բարբառներից, կան երկու տեսակի խոսվածքներ, որոնցով խոսում են հայ ուսումնականները արևելահայ և արևմտահայ հասովածները։ Այսպիսով լեզվական տարբերութիւնները լինում են ոչ միայն տեղային, այլև սոցիալական։ Թե տեղային խոսվածքները, բարբառները, և թե սոցիալական տարբեր խոսվածքներն ու բարբառները ունենում են և՛ քերականական, և՛ արտասանական տարբերութիւններ։

Հին հայ հասարակութեան բարձր խավը խոսել է մի լեզվով, որ ժողովրդական լեզուներից մի շարք տարբերութիւններ է ունեցել։ Դա այժմ մենք կոչում ենք **գրաբար լեզու**, այսինքն «գրի ձևով» լեզու, մինչդեռ դա եղել է իր ժամանակին բանաւոր լեզու։ Այդպես էլ 12—13 դարերից սկսած ստեղծվել է խոսակցական գրական մի մի ինչ լեզու, որ մենք կոչել ենք **միջին հայերէն**, ինչպես և նոր դարերում մեզ մոտ առաջացավ մի խոսակցական ընդհանուր լեզու, որ կոչում ենք **արեւելահայ գրական հայերէն**, իսկ արևմտահայերի մոտ առաջացավ մի այլ ընդհանուր խոսակցական լեզու, որ կոչում ենք **արեւմտահայ գրական հայերէն**։

Թե տեղային խոսվածքները, բարբառները, և թե սոցիալական տարբեր խոսվածքները, գրական լեզուները, գրական քաղ-

բառներն ունենում են և՛ քերականական, և՛ արտասանական տարբերություններ։ Այդ տարբերությունները երևան են գալիս միևնույն ժամանակ գոյություն ունեցող և տեղից-տեղ տարբեր՝ լինելով, նաև պատմության ընթացքում զանազան դարաշրջաններում առաջացած և կազմավորված միևնույն լեզվի տարբեր տեսակների մեջ։ Այսպես, օրինակ, **գրաբարն** ունեցել է իր արտասանական կանոնները, գրաբարից հետո 12—13-րդ դարերում առաջացած **միջին հայերենն** ունեցել է իր արտասանական հատուկ կանոնները, որ դրալի տարբերություն է ունեցել գրաբարից։ Այնուհետև նոր դարերում առաջացած և 19-րդ դարում օրինականացված **արևելահայ գրական** լեզուն ունի իր կանոններն ու արտասանական նորմանները, ինչպես և նրա հետ միաժամանակ օրինականացված **արևմտահայ գրական** լեզուն ունի իր կանոններն ու արտասանական նորմանները։ Բնական է, որ մեր լեզվի այդ բոլոր տեսակները, ունենալով արտասանության կանոնների տարբերություն, միևնույն ուղղագրությունն ունենալ չեին կարող։ Մեր առաջին ուղղագրությունը սահմանված է տառերի գյուտի ժամանակ և համեմատված է գրաբարին, այսինքն այն արտասանության, որ ունեցել են գրաբարով խոսող մարդիկ։ Անցել են դարեր, անցել է նաև գրաբարով խոսող հասարակության, առաջացել է սոցիալական նոր խավ, ինտելիգենցիայի և իշխողների նոր դաս, իր ծագումով տարբեր, իր լեզվական օրինաքներով տարբեր, իր արտասանական օրինաքներով տարբեր։ Բայց այդ նոր դասը իր գրականության համար օգտագործել է այն գիրն ու ուղղագրությունը, որ հնարված են եղել գրաբարի համար։ Հասկանալի է, որ այդ դեպքում արտասանությունը գրությունից տարբեր կլինի։ Գրելով գրաբարի նման, բայց արտասանելով իրենց նման, այդ նոր հասարակության մարդիկ ստեղծում են գրության և արտասանության տարբերություններ։ Դրա հետևանքով կարիք է զգացվում ուղիղ գրելու (այսինքն արտասանությանը չհետևելով) կանոններ սահմանել և դրանցից էլ առաջ է գալիս **ուղղագրությունը**։ Որոշ դեպքերում ուղիղ գրե-

լու գործը թեթևացնելու համար հարմար է դասավում գրությունը հարմարեցնել արտասանության, եթե այդ չի խանգարում լեզվի ավանդականությանը. և չի ձևասում գրի կուլտուրային։ Այդ դեպքում կատարվում է ուղղագրական ռեֆորմ։ Ուղղագրական ռեֆորմ կատարելը շատ դժվարին և պատասխանատու գործ է և ամեն անգամ այդ ռեֆորմը կատարել չի կարելի։ Մայրահեղ անհրաժեշտության դեպքում, երբ հասարակական խոշոր փոփոխությունները հրամայական պահանջ են դարձնում գրի հնչացումը դրելու դյուրացումը և հասարակական մատչելիությունը, այդ դեպքում կատարվում է ուղղագրական ռեֆորմ։ Մեզ մոտ հայերենի մեջ կատարված են **երկու անգամ** ուղղագրական ռեֆորմ **և մեկ անգամ** ուղղագրական մասնակի բարեփոխություն։

Սրանն ասացինք, որ հայերենի համար առաջին անգամ ուղղագրական կանոնները սահմանվել են 406—412 թ. թ., երբ Մեսրոպ Մաշտոցի լույսից հնարվել էին հայերենի գրերը։ Այդ ժամանակ ուղղագրական կանոնները բխել են այդ ժամանակվա խոսակցական ընդհանուր լեզվի՝ գրաբարի, արտասանական կանոններից։ Այսինքն, հնարվել են այն գրերը, կամ այնպիսի գրեր, որոնք ճշտությամբ արտահայտել են գրաբարի արտասանությունը։ Իսկ որովհետև մեր հնարված գրերը 36 են, ուրեմն գրաբար լեզուն ունեցել է 36 հնչյուն, որոնք արտահայտվել են հետևյալ գրերով՝ ա, բ, գ, դ, ե, զ, է, ը թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք։

Այս 36 տառերը ամեն տեղ արտահայտել են միևնույն հընչյունները, գիր կարդացողն ամեն տեղ միևնույն տառի համապատասխան արտասանել է միևնույն հնչյունը, այսինքն, **բ** տառը, որտեղ էլ լինի, բառի սկզբին, մեջը թե վերջում, ամեն տեղ արտասանվել է **բ** և ոչ երբեք երբեմն **փ**, ինչպես այժմ։ Այժմ **խաբել** բառն արտասանվում է **խափել**, **հարբել** բառն արտասանվում է **հարփել**, **արբել** բառն արտասանվում է **արփել** և այլն, մինչդեռ **բերաց** բառն արտասանվում է **բերաց**, **բարի** բառն արտասանվում է **բարի** և այլն։

Նույնը կարելի է ասել նաև մյուս հնչյունների մասին, ինչպիսին են դ, ղ, ձ, ջ, ղ, վ և այլն։

Գրաբար լեզվի մեջ չի եղել ֆ հնչյունը, ինչպես նաև պարզ «օ» հնչյունը, այդ պատճառով էլ այս տառերը գրաբարի մեջ չեն եղել ու երբեք չեն հանդիպում։ Չի եղել նաև «և» գիրը, որը բարդված է 13—14-րդ դարերում ե և ւ գրերից։

13-րդ դարում չկար այլևս գրաբարի արտասանությունը, ընդհանուր գրական լեզվով խոսող հասարակությունը արտասանության տարբեր կանոններ ուներ, բայց գրի համար շարունակում էր օգտագործել գրաբարի ուղղագրությունը, այդ պատճառով էլ սխալներ էին առաջ գալիս, որովհետև գրաբարի, կենդանի լեզու լինելու ժամանակ, արտասանությունն ինքնին թելադրում էր անսխալ գրել, իսկ միջին հայերենի արտասանության, ընդհակառակն, խանգարում էր ճիշտ գրելուն և արտասանությունը գրողին հաճախ սխալանքի մեջ էր դնում. օրինակ՝ գրաբար լեզվի մեջ ի և է գրերը համապատասխանում էին տարբեր հնչյուններին, միջին հայերենում համապատասխանում էին միևնույն հնչյունին։ Բառավերջում ձայնավորից հետո գրաբարն արտասանում էր յ կիսաձայնը, միջին հայերենում բառավերջում յ կիսաձայնը չէր արտասանվում (գրաբար՝ **տղայ**, միջին հայերեն՝ **տղաւ**)

Գրաբար լեզվի մեջ բ, գ, դ, ձ, ջ հնչյուններն ամենուրեք համապատասխանում էին միևնույն բ, գ, դ, ձ, ջ արտասանության, մինչդեռ միջին հայերենում բառասկզբին արտասանվում էին պ, կ, տ, ծ, ճ, իսկ բառամիջում և վերջում՝ վ, ֆ, բ, ց, չ. օրինակ՝ **պիրաց, տուն, ծու, որպ, մարբ** և այլն։

Այս և նման բազմաթիվ տարբերությունները միջին հայերենի արտասանության և գրաբարի ուղղագրության միջև առիթ էին տալիս մեծ խանգաշփոթությունների, դրա հետևանքով 13-րդ դարում սահմանվեցին ուղղագրական կանոններ, ըստ որի որոշվեց՝

1. բաղաձայնների գրության մեջ որևէ փոփոխություն չմտցնել։

2. պահպանել նույնությամբ ե-ի և է-ի գրությունը.

3. ո գրել ամեն տեղ, որտեղ դրաբարում հանդիպում է.

4. գրաբարի աւ երկբարբառի փոխարեն վաղ վանկերում գրել մի նոր տառ, որ հայերենը չուներ, այն է՝ օ տառը (օրինակ՝ աւր-օր).

5. բառավերջում ա-յց և ո-յց հետո ամենուրեք գրել յ՝ թեև չի արտասանվում, բացառությամբ դերանունների և բայերի հրամայական ձևերի.

6. ընդունել այբուբենի մեջ ճ տառը և գրել այն դեպքում, երբ նա լսվում է բառասկզբին, օրինակ՝ ֆրեք (եղբայր):

Այսպիսով առնմանվելին մեր գրական լեզվի ուղղագրական նոր կանոններ և դրա հետևանքով առաջացավ նոր այբուբեն, այսինքն, ավելի ճիշտ, նախորդ այբուբենի վրա ավելացան օ և ճ գրերը: Ուստի գրում էին նախկին այբուբենը, շարունակելով՝ «և՝ օ, ճ»: Այդ ու-ը գոյծածվում էր երբև շաղկապ, այսինքն թվում էին 36 տառերը և ավելացնում նաև՝ օ, ճ,: Ավելի ուշ, երբ «ու» շաղկապի երկու գրերը միանալով գործածն մեկ գիր (և), այն ժամանակ «ու»-ն էլ երբև գիր ավելացավ այբուբենի մեջ և մեր այբուբենն առացավ հետևյալ տառերը.

ա, բ գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ պ, ջ, ռ, ս, վ տ, ր, ց, ւ, փ, ք, օ, ֆ:

Այս այբուբենի մեջ չմտավ աւ գիրը, որովհետև նա կազմված էր ո-ից և ւ-ից, որոնք միացին միշտ միմյանցից անջատ, ուստի աւ-ն գիր չհամարվեց, մինչդեռ նույն ւ-ը, միանալով ե-ին, մի գիր կազմեց, և այդ գիրը «և»-ը, մտավ այբուբենի մեջ.

Ուղղագրական այս կանոնները պահպանվեցին բավական երկար ժամանակ, համարյա նույնքան, որքան գրաբարի առաջին ուղղագրությունը, այսինքն 7—800 տարի: Այդ ուղղագրությունը բավական դժվար ուղղագրություն էր և շատերին չէր հաջողվում այնքան յուրացնել, որ անսխալ գրեին, ուստի ձեռագրերի մեջ հաճախ կարելի է հանդիպել ուղղագրական սխալների: Եթե դա

մի կողմից սխալվողի համար պատիվ չի բերում, որովհետև ուղղագրական սխալ է անում, մյուս կողմից մեզ համար շատ ձեռնտու և օգտավետ է, որովհետև դրանով կարողանում ենք որոշել, որ մեր ուղղագրությունը ամբողջովին չի համապատասխանում խոսակցական լեզվի արտասանության, ուրեմն հայերեն լեզվի գրության և արտասանության մեջ եղած տարբերությունը դալիս է շատ հնից։ Մենք դրանով պարզում ենք, որ ժողովրդական լեզվի արտասանության կանոնները որոշ տարբերություն ունեին գրաբարի ուղղագրությունից և արտասանությունից։

Երբ 19-րդ դարում մեր երկու գրական լեզուն՝ **արեվելահայ** և **արեվմտահայ**, հասարակական օրինականություն ստացան և հատատավեցին գրականության անդամատանում, այդ ժամանակ ուղղագրական օրեհ ռեֆորմ չկատարվեց, այլ պահպանվեցին ուղղագրական այն կանոնները, որոնք ընդունված էին գրաբարի մեջ հայերենի համար 13-րդ դարից սկսած։

Դրա հիմնական պատճառն այն էր, որ արևմտահայ և արևելահայ գրական լեզուների արտասանությունները զգալի տարբերություն ունեին միմյանցից և գրաբարից։ Եթե ուղղագրական ռեֆորմ կատարվեր, համաձայնեցնելով արևելահայ գրական լեզվի գրությունն արևելահայ գրական լեզվի արտասանության, իսկ արևմտահայ գրական լեզվի գրությունն արևմտահայ արտասանության, այդ դեպքում այդ երկու լեզուներով խոսողները միմյանց գրածը չէին հասկանա, կամ հասկանալու համար պետք է մեծ ջանք գործադրեին, պետք է երկար սովորեին։ Դա կբաժաներ հայերեն լեզվի կուլտուրան երկու տարբեր մասերի և չէր օժանդակի մեր ժողովրդի ընդհանուր կուլտուրայի զարգացմանը, որովհետև այդ ժամանակներում մեր ժողովուրդը, պետականության կորցրած լինելով, ենթակա էր մի կողմից տուրանական միապետության հալածանքներին, մյուս կողմից ռուսական միապետության ճնշումներին։ Կուլտուրայի բաժանվածությունը կթուլացներ մեր ժողովրդի դիմադրական ուժը և կվնասեր նրան, այդ պատճառով էլ շատ իրավացի կերպով մեր հասարա-

կական գործիչները (Նալբանդյան, Նազարյան և մյուսները) ուղղագրական ռեֆորմ չկատարեցին։ Գրաբարի ուղղագրության պահպանումը միօրինակություն էր ստեղծում գրության մեջ և դրանով մի լեզվի գրականությունը մյուսի համար զարձնում մատչելի։ Այդ, իհարկե, օժանդակում էր մեր ժողովրդի ընդհանուր կուլտուրայի պահպանմանն ու առաջընթացին, մինչև կգային մեր այսօրվա լավ օրերը։

Եթե գրական լեզվի հին ուղղագրությունը կատարից իր պատվավոր դերը ամբողջ 70—80 տարվա ընթացքում։ Բայց ահա հայատառությունում հաստատվեցին սովետական կարգեր, մեր գրական լեզուն զարգանալու նոր հնարավորներ ստացավ։ Սովետական իշխանությունն ապահովից նրա համար զարգանալու նյութական, բարոյական, հասարակական և պետական բոլոր պայմանները։ Մեր գրական լեզուն զարձավ պետական լեզու ու այլևս որևէ վտանգ նրա գոյությանը, որևէ ճնշում մեր կուլտուրայի վրա, որևէ խոչընդոտ մեր զարգացման համար գոյություն չունեը և լինել չէր կարող։ Հասկանալի է, որ սովետական հասարակարգը շահագրգռված պետք է լիներ մեր լեզվի է՛լ ավելի զարգացման մեջ ու այդ զարգացման համար պետք է ստեղծեր հնարավորություններ ու միջոցներ։ Այդ պայմաններում ահա եկավ հին ուղղագրության բոլոր թերությունները, նրանք ավելի ակնհայտ դարձան երբևէ մեր լեզվի զարգացման խանգարիչ մոմենտներ։ Հայերին գրական լեզուն, որ սրվին զարձել էր պետական լեզու, պետք է զարգանար իր լայնությամբ և խորությամբ։ Մի կողմից նա պետք է իր ներսում զարգանար, բարձրանար, կուլտուրականանար երբևէ լեզու, մյուս կողմից նա, **իբրև ժողովրդական լեզու**, պետք է զանազան մասսայի անհրանությունն, և այդ պետք է կատարվեր շատ արագ տեմպով, որովհետև սոցիալիզմի կառուցումը մեր երկրում պահանջում էր գրագետ զարձնել մասսաներին։ Ահա այս պայմաններում հին ուղղագրությունը շատ մեծ խոչընդոտներ էր ստեղծում. այդ ուղղագրությունը սովորելու համար պետք էր տասնյակ տարի

A 1991

պատվել։ Օրինակ՝ մեկնույն o ձայնավորի համար կային երկու գիր՝ o և ո։ Սակայն ամեն դեպքում էլ հստակ կանոններ չկային և չէր կարելի լսմանալ, թե ո՛ր դեպքում պետք է գրել o և ո՛ր դեպքում՝ ո։ Օրինակ՝ աՏոր բառը գրվում էր o-ով, իսկ գրոՏ բառը գրվում էր ո-ով։ Երկու դեպքում էլ արտասանությունը միատեսակ էր, բայց գրությունը տարբեր։ Անսխալ գրելու համար անհրաժեշտ էր հարյուրավոր բառեր անգիր անել. դա մի անտանելի աշխատանք էր, որ իզուր հոգնեց էր խլում մարդուց։

Նույնն էր նաև ե-ի և է-ի խնդիրը։ Բառամիջում լսում էր է, բայց գրվում էր մի դեպքում է, մյուս դեպքում ե, օրինակ՝ տէր, աէր, մեր, ձեր և այլն։ Նույնպես և բառասկզբին արտասանվում էր ի, բայց մերթ գրվում էր յ, մերթ գրվում էր ի. օրինակ՝ Յակոբ, Հայրապետ։ Այսպես էր նաև բառավերջում, մերթ գրվում էր յ, մերթ չէր գրվում, բայց երկու դեպքում էլ չէր արտասանվում, օրինակ՝ ցղայ, աա, դա, Ցա. նույնը կարելի է ասել վ, ւ գրերի և ձայնավորից առաջ ընկած ու գրի մասին, որոնք արտասանվում էին վ, բայց գրվում էին տարբեր (Ցաւ, կով, աւուր և այլն)։

Այս բոլորը պատմականորեն կարելի էր հիմնավորել, բայց արտասանությամբ հիմնավորելն անհնարին էր, ուստի պետք էր երկար չանգ թափել սովորելու համար, իսկ այդ բանը խոչընդոտ էր հանդիսանում մեր լեզվի զարգանալուն և ընդարձակվելուն։ Ահա այդ պատճառով էլ Սովետական իշխանությունը, որ շահագրգռված էր հայերեն լեզվի զարգացման և ընդարձակման հետաքրքրվելով, 1922 թ. ապրիլի 4-ի օրենքով կատարեց **ուղղագրական ռեֆորմ**։ Ըստ այդ ռեֆորմի ձայնավորների ուղղագրությունը որոշվում էր ըստ արտասանության։ Ստեղծվեցին ուղղագրական հետևյալ կանոնները.

1. o լսվելիս ամեն տեղ գրել ո.
2. է լսվելիս ամեն տեղ գրել ե.
3. բառասկզբին ո լսվելիս գրել ոչ թե ո, այլ վո.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

4. բառասկզբին և լսվելիս ամեն տեղ գրել ոչ թե և, այլ յե.

5. վ լսվելիս ամեն տեղ գրել վ և ոչ երբեք մերթ ե, մերթ ու, մերթ վ.

6. բառավերջի չարտասանվող յ-ն ամենուրեք դուրս գցել.

7. ձայնավորից հետո լսվող յ-ն ամեն դեպքում գրել։

Այս և մի քանի այլ կանոններ խիստ հեշտացրին ուղղագրությունը և վերացրին բոլոր դժվարությունները։ Այդ, իհարկե, շատ մեծ առաջադիմություն էր մեր լեզվական կուլտուրայի գործում։

Ճիշտ է, որ մեր ուղղագրության հիմնական դժվարություններից բազմաձայնները ուղղագրությունն էր և դա մնաց (**մարթ** արտասանվում է, **մարդ** գրվում, **կարթ** արտասանվում է, **կարգ** գրվում), բայց ուղղագրության գործն զգալի չափով հեշտացավ։ Սակայն գրական շատ կողմերի հետ միասին ուղղագրական ռեֆորմն ուներ մի քանի մանր թերություններ, որ առաջ եկան որոշ ծայրահեղություններից, որ անխուսափելի էր, եթե նկատի ունենանք ժամանակն ու պայմանները։ Այդ թերություններից արժե հիշատակել.

1. Այբուբենի կարգը խախտվեց և ըստ նոր ուղղագրության ստեղծվեց հետևյալ այբուբենը. ա, բ, գ, դ, ե, զ, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ։

2. Այբուբենից դուրս ընկան օ և է գրերը. բառապատկերները, դրա հետևանքով, խիստ փոփոխվեցին և ստեղծվեց մեր հասարակության համար մի տեսակ կտրվածություն մեր գրական կուլտուրայում։ Ժամանակագրությունից։ Մյուս կողմից բառասկզբի ո և ե երկհնչյունների համապատասխանող գրերը, գրվելով երկու գրերով (**վո, յե**), ոտնահաման օրենքին հակառակ քայլ հանդիսացան, դրան ավելացավ նաև յ-ի ավելորդ առատությունը, և այդ ամենն ընդհանուր առմամբ որոշ չափ հասցրին և անհարմարություն ստեղծեցին մեր գրավոր կուլտուրայի համար։

Ուստի անհրաժեշտություն զգացվեց վերացնելու այդ մասնակի թերություններըը։ Այդ պայմանով էլ 1940 թվի օգոստոսի 22-ին կատարվեց մասնակի բարեփոխություն, որի էությունը հետևյալն է.

1. Ո լավելիս բառասկզբին գրել ո, իսկ մյուս բոլոր տեղերում ո և ամենուրեք կարդալ օ. օրինակ՝ **or, օգուս, բոլոր, մոլոր** և այլն։

Բացառություն են կազմում **ով** և **ովքեր** բառերը, որոնք թեև ո հնչյունով են արտասանվում, բայց գրվում են ո գրով, որովհետև այդ բառերի արմատն է **ո**։

2. Բառասկզբին գրել **ո**, եթե լսվում է **վո**, օրինակ՝ **որ, որդի, ոգի, որոշ** և այլն։

3. **Վո** գրել միայն օտարազգի և ռուսերեն նոր փոխառնված հատուկ և հասարակ անուններըի սկզբին. օրինակ՝ **վոլգա, վոլտեր, վոլտ** և այլն։

4. Է լսելիս բառասկզբին գրել է, իսկ մյուս բոլոր տեղերում ե և կարդալ է, օրինակ՝ **էական, էգ, էպոխա, գեղեցիկ, մեկենաս** և այլն։

5. Բառասկզբին գրել **ե**, եթե լսվում է **յե**. օրինակ՝ **եռ, երեք, երեր, Եղիազար** և այլն։

Բարդությանը համ ածանցման ժամանակ բառերի կամ արմատների ուղղագրությունը չփոփոխել. ուստի **է**-ով կամ **օ**-ով սկսվող արմատները, եթե նրանք երբև արմատ գիտակցվում են, բառամիջում պահպանում են իրենց սկզբի **օ**-ն և **է**-ն. օրինակ. **որ-այսօր, օգուս-անօգուս-հօգուս, էջ-վայրէջք, է-մանել, որ-ակ, ուրվէ, ովվէ** և այլն։ Նույն օրենքով էլ՝ **եռ-ինքնաեռ**։

6. Ժամանակ բայերի համար սահմանվեց հետևյալ ուղղագրությունը։

Ներկա ժամանակը գրել հետևյալ կերպ. **եմ, ես, է, ենք, եք, են**, այսինքն՝ բոլոր ձևերն սկսել **ե**-ով, բացի եզակի երրորդ դեմքից, որ պիտի գրվի **է**, քանի որ դա ինքը մի առանձին

արմատ է, որից ածանցվում են **հակաց, հօրքյուց, հնձաբանուքյուց, մաճառէ** և նման բառերը։

Անցյալ ժամանակը գրվել հետևյալ կերպ. **էի, էիր, էր, էինք, էիք, էին**։

7. Ց ձայնակապի օրենքը ձևակերպվեց այսպես.

Հայերեն բոլոր բառերում յ ձայնակապը գրվել միայն ա և ո գրերից հետո. օրինակ՝ Մարդոյն, տղայն, կայարան, գրվել, տեսնվել, կատարածուվ և այլն։

Այսպիսով 1940 թվի օգոստոսի 22-ի մամնակի բարեփոխությամբ վերականգնվեցին բառասկզբին օ և է գրերը, ո և ի գրերն ստացան իրենց նախկին արտասանությունը և յ-երի անհրաժեշտ գործածությունը որոշ չափով կրճատվեց։ Սահմանվեց նոր այբուբենը, որը հիմնականում նման եղավ հնին.

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ու, փ, ք, և, օ, ֆ։

Այբուբենից դուրս մնաց ւ գիրը, բայց նա էլ պահպանվեց ու գրի մեջ, որ բռնեց նրա տեղը այբբենական շարքում։ Այսպես ամբողջացվեց և ավարտվեց մեր ուղղագրական ռեֆորմի գործը, և մենք այժմ ունենք կուլտուրական ժառանգության հետ սերտորեն կապված, բայց համեմատաբար շատ հեշտ ուղղագրություն։ Այդ նոր ուղղագրությամբ մեր լեզուն սովետական կարգերում զարգանալու բոլոր հնարավորություններն ունի և կզարգանա։

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ա) ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Օ և Ո

1. **Ո** լսվելիս միայն բառասկզբին գրել **օ**, իսկ բառամիջում և բառավերջում գրել **ո** և կարդալ **օ**։ Օրինակ՝ **օր, օրենք, օղ, օձ, օգուտ** և այլն, բայց՝ **բոլոր, բոսոր, հաս, հոր, Մարտ, կարտ** և այլն։

Ոչ և **ոմիներ** բառերը կազմում են բացառություն. այդ բառերում թեև լսվում է սկզբին **օ**, բայց գրվում է **ո**։

2. Երբ **օ**-ով սկսվող բառը բարդվում է, նրա սկզբի **օ**-ն բառամիջում պահպանվում է։ Օրինակ՝ **որ,-այսօր, օդ-անօդ, օրենք-անօրենք, անօրենք** և այլն։ Այդ բոլոր բառերի մեջ գրվում է **օ**, որովհետև բարդությունը կազմող բառերից երկրորդները **օ**-ով սկսվող բառեր են։

3. **Ո** լսվելիս բառասկզբին գրել **ո** և կարդալ **վո**։ Բառամիջում լսվող **վո**-ն գրել երկու տառով՝ **վո**։ Օրինակ՝ **որ, որդի, որկոր, ոսո** և այլն, բայց՝ **պինվոր, բանվոր, հեռավոր** և այլն։

4. **Ո** գրով սկսվող բառը բառամիջում ուղղագրությունը պահպանում է նույնությամբ։ Օրինակ՝ **որոշ-անորոշ, որդի-քնորդի, որակ-անորակ-բարձրորակ** և այլն։

5. Օտարազգի և առանձին նոր փոխառնված հատուկ կամ հոտարակ անունները գրել **վո**։ Օրինակ՝ **վոլտեր, վոլգա, վոլտա** և այլն։ Բառարարդության մեջ այդ բառերի ուղղագրությունը պահպանվում է նույնությամբ։ Օրինակ՝ **վոլգա-մերձվոլգյան**։

Է և Ե

1. Է լսվելիս բառասկզբին գրել **է**, իսկ բառամիջում և վերջում գրել **ե** և կարդալ **է**։ Օրինակ՝ **էլի, էություն, էպոխա,**

էդուց, էջ և այլն, բայց՝ բերել, գեղեցիկ, ասել, քեր, եթե, երբևիցե, որևիցե և այլն։

2. է-ով սկսվող բառերը բարդության մեջ պահպանում են իրենց գրությունը։ Օրինակ՝ էակաե-անէական, էջ-վայրէջք, մանրէ, երբևէ, որևէ և այլն։

3. ե լավելիս բառասկզբին գրել ե և կարդալ յե։ Օրինակ՝ եղեռն, երեկո, եթե, երբեք, երբեմն և այլն։

4. Բառամիջում բարդության կամ ածանցման ժամանակ ե գրով սկսվող բառերը պահպանում են իրենց ուղղագրությունը։ Օրինակ՝ եզր-անեզր-ծովեզր, երկու-տասներկու-քսաներկու, երեք-տասներեք, եռ-լինքնաեռ և այլն։

5. Բառամիջում և վերջում, ինչպես և առանձին, եվ կամ յեվ կապակցությունը գրել և. օրինակ՝ տերև, նաև, տեսական, ես և դու և այլն։ վ-ով սկսվող բառերի ուղղագրությունը բարդության մեջ պահպանել. օրինակ՝ հոգեվարք։

Ը

1. Բառասկզբում և բառավերջում ը ձայնավորը գրվում է, երբ արտասանվում է. օրինակ՝ ընկեր, ընդունել, ընտրել, ընծա և այլն. գիրքը, լուսիկը, բակը, Գրիգորը, դպրոցը և այլն։

2. Բառասկզբում սկ, սպ, ստ, սբ, սփ, սթ, շկ, շպ, շտ, զբ, զգ կապակցություններից առաջ, թեև արտասանվում է մի ը, բայց չի գրվում. օրինակ՝ սկսել, սկիզբ, սպիտակ, ստեղծել, ստուգել, սբանչացնել, սիրուհի, սթափվել, շկոլա, շպարել, շտապել, զբոսնել, զգալ և այլն։

Ըստ նախկինը կազմում է բացառություն։

3. Բառավերջի ը ձայնավորը վոխվում է ն բաղաձայնի, երբ հաջորդ բառն սկսվում է ձայնավորով կամ սկ, սպ, ստ, սթ, սբ, սփ, շկ, շտ, շպ, զբ և զգ կապակցություններով. օրի-

նակ՝ **Աւտակերթը կարդում է։ Պիոներն աշխատում է։ Կոլտնտեսականն աշխատում է։**

Նույնն է և՝

Բանվորը դնկավարում է մեքենան։ Աւտակերթը մտնում է դասարան։

Բայց՝

Բանվորն գբոսնում է։ Աւտակերթն սպասում է ուսուցչին և այլն։

Այս կանոնը, սակայն, ավելի բարեհնչյունության արժեք ունի, քան ուղղագրական, ուստի կարելի է թէ ը գրել և թէ ն։

4. Բառամիջում սովորաբար ը ձայնավորը թեև լսվում է, բայց չի գրվում. Օրինակ՝ **Մկրտիչ, պրպտում, բաղդր, ծաներ, գլուխ։**

Նախածանցավոր և բարդ բառերի մեջ ը ձայնավորը գրվում է, եթե ածանցավոր բառը կամ բարդվող բառերից վերջինն սկսվում է ը ձայնավորով. օրինակ՝ **ընթաց-նախընթաց, ընդունակ-անընդունակ, ընկեր-դասընկեր, ընտիր-հատընտիր, ըստ-օրըստօրե, ընդ-խոչընդոտ և այլն։**

5. Տողադարձի ժամանակ թէ միացող վանկերից վերջինն և թէ մյուս տողն անցնող վանկերից առաջինի մեջ արտասանվող ը ձայնավորը գրվում է. օրինակ. Մը-կըտիչ, Մկը-տիչ, կոլտն-տեսական, ծա-նրը և այլն։

բ) ԻՆ, ՑԱ, ՈՒՅ ԵՐԿՀՆԶՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Իա երկհնչյունը շփոթվում է յա երկհնչյունի հետ, ուստի պետք է հիշել հետևյալ կանոնները.

1. Հայերեն կամ հայացված բառերի նախամահերի մեջ **իա** *կապակցությունը գրվում է՝ հիքիաթ, դասախարակ, Սուքիաս, Մարիամ, օվկիան, կրիա, ծիածան և նրանց բառերի մեջ։*

2. **Իա** *գրվում է ձի, քի, լի, հի, մի, դի բառամասե-*

նկել և ացի կամ ի վերջավորություն ունեցող բառերի բարդության և ածանցման ժամանակ. օրինակ՝ ձիավոր, քիամի լիառատ, հիանալ, միակ, դյուցազնական, արդիական, արդիականալ և այլն։

3. ա դրվում է եվրոպական և այլ լեզուներից փոխառնված բառերում կամ երկբնների հաստուկ անուններում. օրինակ՝ պրոլետարիատ, սոցիալիզմ, մատերիալ, ատոցիացիա, քիմիա, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա և այլն։

4. Մարդկանց հատուկ անուններին (անձնանուններին) վերջում դրվում է յա. օրինակ. Օքելյա, Վլադիկյա, Ամալյա, Վիկտորյա, Լուսյա, Մանյա և այլն։

Ծանոթ. I.—Անձնանուններին շեշտված վերջնավանկ իա-ն դրվում է իա. օրինակ՝ Լի՛ա, Մարի՛ա և այլն։

Ծանոթ. II.—Մի քանի պատմական անձնանուններում պահպանվում է իա վերջավորությունը. օրինակ՝ Զաքարիա, Անանիա, Եղիա։

5. Մնացած դեպքերում հայերեն բառերի մեջ յա լինելու դրվում է յա. օրինակ՝ Անոյակ, մատյան, պաշտոնյա, ոսկյա, փոխյա և այլն։

6. Ձայներկինչյունը բառաբմաններին ածանցվելու և բարդվելու ժամանակ ավելորթաբար վերածվում է պարզ ու. ձայնավորի. օրինակ՝ ծուլ-ծուլանալ, քուչ-քուչակռիվ-քուչակռիվություն, բուքրուբալիա, առուչ-առուչում-առուչառու և այլն։ Դույն բառը չի ենթարկվում այս օրենքին (դույն-դույնություն)։

Անհնականն բարդության դեպքում յ-ն պահպանվում է. օրինակ՝ քուչավություն։

գ) Ց ՁԱՅՆԱՎՈՐԸ

1. Հայերեն բոլոր բառերում, երբ կից ձայնավորների մեջ յ է լսվում, այդ յ-ն դրվում է միայն ա և ո ձայնավորներից

հետո. օրինակ՝ հայաբան, հայեցողություն, հայկն, հայուն, Մայոյի, Նարոյի, նոյեմբեր և այլն։

Այդ յ-ն կոչվում է ձայնավանական։

2 ննա, ատս, ոռս. երկձայնավորները, որոնք արտասանվում են առանց յ-ի և գրության մեջ յ չեն ունենում, պատահում են ևրոպական բառերում. օրինակ՝ բռա, կակաո, կլոուճ և այլն։

դ) ՕԺԱՆԴԱԿ ԲԱՑԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Օժանդակ բայի նեբկայի ձևերն սկսվում են ե-ով, բայի եզակի երրորդ դեմքից, որ կլինի է. եմ, ես, է, ենք, եք ենւ։

2. Օժանդակ բայի անցյալի ձևերը ենթարկվում են ընդունված կանոնին, այսինքն, սկսվում են է-ով. էի, էիր, էր, էինք, էիք, էին։

3. Բարդության կամ ածանցման դեպքում օժանդակ բայերի ուղղագրությունը պահպանվում է նույնությամբ. օրինակ՝ էի-չէի, էր-չէր, եմ-չեմ, ես-չես, է-չէ։

Ծանոթ.—Բոլոր բայական ժամանակների վերջավորությունները դիտվում են իբրև բայական վերջավորություն և դրվում են բառամիջի ե-ով. օրինակ.

գրեմ, գրես, գրի և այլն.
գրեի, գրեիր, գրեր։

ե) ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Հ

Հ բաղաձայնը մի շարք բառերում ր-ից հետո չի արտասանվում կամ շատ քիչ է արտասանվում.

դրվում է	արտասանվում է
ախարհ	**ախար**
խարհուրդ	**խորուրդ**

ցիրի	**ցիր**
արհամարհել	**արհամարել**
ձանձապարհ	**ձանձապար**
խոնարհ	**խոնար**
ցնորհիվ	**ցնորվ**
ժպիրի	**ժպիր**

b) Ջ և Չ

1. Ր *բաղաձայնից հետո անհնչյունափոխ բառարմատներում լսվում և գրվում է* չ՝ **դարչին, չարչի, փարչ** *բառերում:*

2. Ր *բաղաձայնից հետո մյուս բոլոր անհնչյունափոխ բառարմատներում, եթե լսվում է* չ, *գրվում է* ջ. *օրինակ՝* **ասիրջ** *(ամուլ, անպտուղ),* **որջ** *(գազանի բույն),* **անուրջ, արջ, արջառ, արջառուկ, բադարջ, լուրջ, խարջ, օրջմոլիկ, բրջել, հորջորջել, մրջյուն, երջանիկ, ծուրջ, վերջ** և *այլն:*

3. Ղ *բաղաձայնից հետո լսվում և գրվում է* չ *միայն գեղչել բառի մեջ:*

4. Ղ *բաղաձայնից հետո, եթե լսվում է* չ, *գրվում է* ջ *հնչյունափոխության չենթարկված բոլոր բառարմատներում. օրինակ՝* **աղջամուղջ, այծեղջյուր, աղջիկ, առուղջ, գաղջ, զղջալ, նղջյուր, չղջիկ, ողջույն, գնդջուկ, ծնդջ, ոլջ, ոլջախոհ** և *այլն:*

c) Ջ և Ց

1. Ր *բաղաձայնից հետո լսվում և գրվում է* ց *հնչյունափոխության չենթարկված հետևյալ բառարմատներում.* **պախուրց** *(սանձ),* **արցունք, ապաքարց** *[այս նշանը (՚)],* **հարց, մրցել, տրցակ, ուրց:**

2. Ր *բաղաձայնից հետո, եթե լսվում է* ց, *գրվում է* ձ *մյուս բոլոր անհնչյունափոխ բառարմատներում. օրինակ՝* **արվարձան** *(մոտակայք),* **աճվեհադարձ, աճխատավարձ,**

արձագանգ, արձակ, արձակուրդ, արձան, արձանագրել, բարձ, բարձել, բարձր, բարձրաբերձ, բացարձակ, դարձ, դարձվածք, դարձյալ, դերձակ, դերձան, դիմադարձություն, ընդարձակ, իրադարձություն, խուրձ, համարձակ, հանդերձ, հանդերձարան, հանդերձյալ, հերարձակ, հերձված, հորանգիք, ձորձ (*լաթ, հագուստ*), մանկաբարձ, մերձավոր, հեղարձ, օրավարձ, ոսկեձարձակ, որձ, որձոսքար, վարձակալ, վարձ, փորձ, փորձանգիք, փորձառու և այլն։

3. Ղ, *բաղաձայնից հետո լսվում և գրվում է* ց *հետևյալ բառերում*. բաղց, բաղցր, բաղցու, բաղցկեղ (*ռաակ կոչվող հիվանդությունը*)։

4. Ղ, *բաղաձայնից հետո, երբ լսվում է* ց, *գրվում է* ձ *բոլոր անհնչյունափոխ բառաբմամանեբում*. *օրինակ՝* մեղամաղձոտ, ատաղձ, գուղձ (*հողի կոշտ*), դաղձ, դեղձանիկ, դեղձ, բղձալ, իղձ, մաղձ, մղձավանջ, ծնչահեղձ, ջրահեղձ, փղձկալ, հեղձամաղձուկ (*խեղդող, չունչ կտրող*), բաղձանգիք, զեղձ և այլն։

d) Դ և թ

1. Ի *բաղաձայնից հետո լսվում և գրվում է* թ *հետևյալ անհնչյունափոխ բառաբմամանեբում*. արթուն, հարթ (*տափակ*), խարթ (*անհարազատ*), բարթել, հարթ (*կռվի ձագ*), մարթել, շաղարթ, շուրթ, սաղարթ, կիրթ, կարթ, բերթ, հերթ, մերթ, երթ, շարթել (*դուրս կորզել*), պարթև, որթ (*վազ*), բերթիկ, զվարթ, յուրթ (*երկնագույն*), երբմնջալ, խարիճ, փարթամ, ձյորթի, փիլիերթ։

2. Ի *բաղաձայնից հետո մյուս բոլոր անհնչյունափոխ բառաբմամանեբում, եթե լսվում է* թ, *գրվում է* դ. *օրինակ՝* մարդ, բարդ, վարդ, բերդ, յարդ, զարդ, երդում, կարդալ, ցյարդ, երդ (*երգիկ*), երդակից և այլն։

3. Ե բաղաձայնից հետո լսվում է **բ**, բայց գրվում է **դ** հետևյալ բառերում. **կենդանի, աճդահ, խնդիր**։

Այդպես է նաև **ընդ** նախածանցով կազմված բառերի մեջ, օրինակ՝ **ընդհանուր, ընդունել, ընդօրինակել** և այլն։

Մյուս բոլոր բառերի մեջ գրվում է **բ**, օրինակ՝ **կանքեղ, ընթրիք, ընթերցանություն** և այլն։

4. Ձայնավորից հետո լսվում է **բ**, բայց գրվում է **դ** մի քանի բառերի մեջ. օրինակ՝ **օդ, վաճառդ, Ադամ, Թադեվոս, դադար**։

Մյուս բոլոր բառերի մեջ գրվում է **բ**, ինչպես՝ **թաթ, թութ, բութ** և այլն։

ե) Բ և Փ

1. Ր բաղաձայնից հետո լսվում և գրվում է **փ** հետևյալ անհնչյունափոխ բառարմատներում կամ երբև արմատ դիտակցվող բառերում. **արփի** (արև), **երփն** (—երանգ), **թարփ, տարփանք, փրփուր**։

2. Ր բաղաձայնից հետո մյուս բոլոր անհնչյունափոխ բառարմատներում և դրանցով բարդված բառերում, եթե լսվում է **փ**, գրվում է **բ**. օրինակ՝ **արբանյակ, արբեցողություն, արբանք, արյունաբուղ, բոբր, բորբոսնել, բարբոխ, դարբին, լիբր, որբ, հարբել, հարբուխ, ձերբակալել, երբ, երբեմն, երբեք, երեսարբիչ, ներքան** (ոսքի տակի կողմը), **ներքոյ, ցուրբ, ցրբություն, ուրբաթ** և այլն։

3. Ղ բաղաձայնից հետո լսվում և գրվում է **փ** հետևյալ բառերում. **հղփացնել, փաղփաղել, շաղփաղփել**։

4. Ղ բաղաձայնից հետո անհնչյունափոխ բառարմատներում և դրանցով բարդված բառերում, եթե լսվում է **փ**, գրվում է **բ**. օրինակ՝ **աղբ, աղբյուր** (արտասանվում է **ախպյուր**), **աղբյուս, բողբոջ, եղբայր** (արտասանվում է՝ **եխպայր**), **ողբ, ողբերգություն** և այլն։

f) Ֆ և Բ

1. Ֆ բաղաձայնից հետո գրվում և արտասանվում է բ հետևյալ արմատներում և որպես արմատ վերակցվող բառերում. արբա, կերբ, հերբել, ցնորբ—(ուսա,—ին,—և), բուրբ, երբիջ, երբրել, սարբ, բուրբ։

2. Ֆ բաղաձայնից հետո, եթե լսվում է բ, գրվում է վ մյուս բոլոր անհնչյունափոխ բառարմատներում. օրինակ՝ **բարգման, Վարգիս, պարզև, նրգ, կարգ, արգելբ և այլն։**

Անձնանուններն վերջնավանգում գրվում են վեց. օրինակ՝ Բալգին, Վազգեն և այլն։

Երկշարք բաղաձայններից ռ և ր, ղ և խ ղարյերի վերաբերյալ նույնպես կան օրենաչափություններ։

g) Ղ և Խ

1. *Անհնչյունափոխ բառարմատներում և դրանցով բարդված բառերում բաղաձայնից առաջ լսվում և գրվում է խ հետևյալ բառերում.* **ախտ** *(ցավ, հիվանդություն),* **վախճան, վիճակ, ապուխտ, բախտ, գերեզման, երախտիք, ժխտել, պահպանել, տախտակ, ոխտ, բոխտ, պխտար, ճախճանճ, բուխտ, բուխտ, դրախտ, լախտ, խոխտ, դժոխք և դուխտ** *վերջավորվող հասուկ անուններում. օրինակ՝ Հայկանուշիկ, Մասրովպետխան, Սանդուխտ։*

2. *Մնացած բոլոր դեպքերում անհնչյունափոխ բառարմատներում և դրանցով բարդված բառերում բաղաձայնից առաջ, եթե լսվում է խ, գրվում է ղ. օրինակ՝* **աղբ, աղջ** *(կնոջ),* **աղխաս, բուղբ, մաղթել, աղբյուր, գաղթել, չղջիկ, խեղդել, ուղտ, ողբ, մաղձ, դաղձ, ողջ, ճեղք, դեղձ** *և այլն։*

h) Ռ և Ր

1. Անհնչյունափոխ բառարմատներում **ճ**-ից առաջ լսվում և գրվում է միշտ **ռ**. օրինակ՝ **դառճալ, բառճալ, խառճել, գառճուկ, դռճակ, ճռճակ, ռառճուբյուն, ձեռճարկ, փրռճներ, բռճկել, եղևռճագործ** (հանցագործ), **մեռճկել** և այլն։

2. Մյուս բաղաձայններից առաջ **ռ** գրվում է միայն հնուհյալ բառերի մեջ. **ուռկան, ուռճաճար, հուռթի, խռպոտ, առվույտ, կառչել** (կպչել), **կռթճել** (հնձվել), **կռվան, մաթռվակ** (գինի ավող)։

3. Մյուս բոլոր բաղաձայններից առաջ անհնչյունափոխ բառարմատներում, եթե լսվում է **ռ**, պետք է գրել **ր**. օրինակ՝ **արծաթ, արծիվ, արտ, արծնել, մարդ, դարդ** և այլն։

4. **Ն**-ից առաջ **ր** կարող է գրվել միայն այն դեպքում, երբ բառարմատի հնչյունափոխության հետևանքով **ճ**-ի և **ր**-ի միջեև ձայնավորը դուրս է ընկնում.

գարուճ—գարճանային
արյուճ—արճատաղա
վերեճ—վերճատուճ և այլն։

5. **Ռ**-ն կարող է ընկնել բաղաձայնից առաջ, եթե բառարմատի հնչյունափոխության հետևանքով դրանց միջև ձայնավորը դուրս է ընկնում և նամ **ռ**-ով վերջավորվող բառն ածանցվում կամ բարդվում է.

առիթ—առթով
պառիկ—պառկել
կռիվ—կռվարար
վառ—(արմատն է՝ **վառ**)
կառ—(արմատն է՝ **կառ**)
առ—(արմատն է՝ **առ**) և այլն։

6. **Ռ**-ով վերջավորվող արմատի կրկնության կազմված՝ բարդ բառերի մեջ առաջին **ռ**-ն դառնում է **ր**.

բարբառ
բրդիռ
մրմռալ (մրմուռ պատճառել)
գրգիռ
մրմուռ և այլն։

7. Ձայնանմանությամբ կազմված բառերը գրվում են ռ-ով, եթե իմաստով ձայնանմանությունից չեն հեռացել.

մռմռալ (մռմռոց հանել)
հռհռալ
գռռգռռալ
դռդռալ և այլն։

k) Մ և Ն

1. Բոլոր շրթնային բաղաձայններից առաջ (բ, պ, փ) լրացվող անգային հնչյունը գրվում է մ. օրինակ՝ բամբակ, ամպ, ամփոփել և այլն։

2. ֆ, պ և փ բաղաձայններից առաջ ն կդրվի միայն ան նախածանցով կազմված բառերում. օրինակ՝

անպտուղ ան—պտուղ
անփույթ ան—փույթ
անբերրի ան—բերրի և այլն։

գ) ՕՏԱՐԱԶԳԻ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

1. Օտարազգի և ռուսերեն բառերի սկզբում գրվում է ռ. օրինակ՝ ռևմիմ, ռեալիզմ, ռեակցիա, ռումբ, ռոմանտիզմ, Ռոստով, ռեցեպտ, ռեվոլուցիա, Ռուսաստան, Ռումինիա և այլն։

2. Նույն բառերի մեջտեղում գրվում է r, օրինակ՝ օպեր-

տուճիսս, պրոկեսար, սերիա, դիրեկցիա, Ցրաճոիա, բնորիա, օրինճեացիա և այլն։

3. Օտարազգի բառերի մեջ ո՝ դրվում է յ և ճ բազաձայններից առաջ, բացի ենեերճացիոճալ, Լոմբճեհրճ և Կարլ բառերից. օրինակ՝ Ռեյիճ, Ժուռճալ, Մառճ (դևս Ցրանսիա-յում)։

4. Օտար և ռուսերեն բառամիջի և վերջի կրկնակ rr դրվում է ռ. օրինակ՝ Ցառ, կաեառ, կոռնկե։

Ե և ի ձայնավորներից առաջ կրկնակ rr դրվում է r. օրի-նակ՝ տերիեոռիա։

Կրկնակ rr դրվում են հայերեն surr, մռրիկ, բերրի բառերի մեջ։

5. Ռուսերեն ля, лю և եվրոպական la, lu կապակցու-թյունները հայերենում դրվում են լա, լու. օրինակ ռեվոլու-ցիա, իլուստրացիա, ապեկուլացե և այլն։ Բացառություն՝ պլյուս, ճլյուս, հոքեյար, ճռոմպլյար, ճուպլյար։

6. «Օտարազգի* և ռուսերեն կրկնակ բազաձայնները առ-առաջարկել համապատասխան մեկ տառով. օրինակ՝ կոմուճիես, կոլեկտիվ, կլասիկ և այլն։

Երբ հայերենում կրկնակ տառի հնչումը պարզ լսվում է կամ երկար է արտասանվում, պահել կրկնակ բազաձայնները. օրինակ՝ մասսա, կասսա, վիլլա և այլն։

Ցանօրություն.—Բառավերջի կրկնակ բազաձայնները հայերեն տառադարձել մեկ տառով. օրինակ՝ Պարրյուս»։

7. «Օտարազգի բառերի x, ks, նույնը և ռուսերենում кс, տառադարձել հայերեն ք-ս ըստ ձայնի. օրինակ՝ Մարքս, էքս-կլուզիվ, տաքսի, բուքսիր։

---

* Ձակերաններով բերված կանոնները առնված են Տերմի-նաբանական Կոմիտեի որոշումներից։

Դաւճրութիւն.—*Բուն ռուսական բառերի* КС-*ը տառադարձել կս-ով, օրինակ՝* **Վիտակով**:

8. «Օտարազգի և ռուսական О-ն բառասկզբում տառադարձել *օ-ով, իսկ բառամիջում և բառավերջում ո-ով. օրինակ՝* **Օակար, բոլճեվիկ**:

բ) Կրկնակ օ-ն (оо) տառադարձել ո-ով (оо) բառամիջում, երբ այդ արտասանութիւնը պահւում է. օրինակ՝ **կոոպերացիա**:

գ) Բառաեկզում օտարազգի VO-*ն և ռուսերէն* ВО-*ն հատուկ և հասարակ անունների մէջ տառադարձել վո-ով, օրինակ՝* **վոլտեր, վոլգա, վոռոշիլով, վոկալ, վոյեւոդա**:

9. «ա) *Բառավերջի ա-ն պահել հունա-լատինական վերջավորութիւն ունեցող բառերի մէջ և հնուց փոխառնւած բառերում. օրինակ՝* **ճիզիկա, դիալեկտիկա, պրակտիկա.**

բ) բառավերջում ա-ն պահել նաև այն բառերում, որոնց ձևն այդ ունի. օրինակ՝ **բնոռհա, դիլիմա**:

Դաւճրութիւն.—*ա) Պահել առանց բառավերջի ա-ի այն ձևերը, որոնք այդպես մտաւոյակտուալ են, օրինակ՝* **պրոբլեմ, թեսեիմ և այլն**:

բ) Երբ հունական բառը վերջւում է լատիներէնով, որտեղ նա առաջել է ս, պահել բառավերջի ա-ն. օրինակ՝ **միռմա, սարկոմա և այլն**»:

10. *Օտարազգի* th-*ն տառադարձել թ-ով. օրինակ՝* **բնոռեմա, բատռոն, էպիթեկա, մաթեմատեկա, աեքրոլոգիա և այլն**»:

11. «*Անգլիական վերջի* on, son *վերջավորութիւնները հայերէն տառադարձել ոն, սոն և ոչ՝ քն, սքն. օրինակ՝* **Ճոնսոն, Վիլսոն, Ճայրոն**:

Է) ԲԱՌԱՐԲԴՈՒԹԵԱՆ ՈՒՂՂԱԴՐՈՒԹԻՒՆ

1. *Երբ բարդվող բառերից երկրորդն սկսւում է ձայնաւորով, հողակտոց չի դրւում. օրինակ՝* **հաճրօգուտ** (հաճար *և*

օզուս), զուգբնթաց (զույգ և բնթաց), դյուրմբռնելի (դյուր և ըմբռնելի):

2. Իրև բացառություն ա հոդակապը դրվում է աւիեն բառից հետո, երբ բաղկող բառերից երկրորդն սկսվում է ձայնավոր հնչյունով. օրինակ՝ ամենաազնիվ, ամենաբնեակ, ամենաերեսիկ և այլն:

3. Հաճախ, երբ առաջին բառը վերջանում է ի ձայնավորով, այս ի ձայնավորը, միանալով ա հոդակապի հետ, դառնում է ե. օրինակ՝ տոգի-ա-ւարը=տոգիւարը, բարի-ա-կամ=բարեկամ և այլն:

4. Նմանողության կարգով, բայց սխալ կազմությամբ այժմ ընդունված է ե-ով բարդել այնպիսի բառեր, որոնց վերջին վանկ վանկն ունի ի ձայնավոր. օրինակ՝ հաւքի-ա-տար=հաւքեատար, ծաղկա-փունջ=ծաղկեփունջ և այլն:

5. Երբ առաջին բառն ունի ու վերջնահնչյուն, այդ ու ձայնավորը ա հոդակապի հետ տալիս է վա վանկը. օրինակ՝ չու-ա-ցուցակ=չվացուցակ, կաթու-ա-խաղ=կաթվախաղ և այլն:

6. Բայն ու իր հարադրություններ կամ հարադիր բայերը դրվում են առանձին. օրինակ՝ քայլ տալ, քարշ տալ, պերճ անել, վազել հասնել և այլն:

7. Հարադիր բարդությունները դրվում են միասին, եթե շեշտ առնում է միայն վերջին հարադիրը, դրվում են առանձին, եթե շեշտ առնում է յուրաքանչյուր հարադիրը. օրինակ՝ ա՛ի ու դոլ>աիուդո՛ղ, մին ու մար>մէնուա՛ր, ա՛ռ և տար>>առնվտու՛ր, ա՛ցի ու դա՛րձ,>ացուդա՛րձ, վո՛խ առ վո՛խ>փոխառփո՛խ և այլն:

Պետք է հիշել, որ հարադիր բարդությունները միասին դրվելիս վերածվում են կցական բարդություններին. օրինակ՝ ոգի և է=ոգիէ, որ և է=որէ, որ և իցե=որիցե և այլն:

8. Շաղկապ կամ միացնող բառ չունեցող հարադիր բար-

գումյուններըը միացած են լինում գծիկով. օրինակ՝ **գոռում-գոչում, երիվ-չորս, փուշ-փուշ, տեսակ-տեսակ** և այլն։

9. Եթե հապավումը կազմված է հատուկ անուն կազմող բառերի սկզբնամասերից, ապա հապավման առաջին տառն է լինում մեծատառ, իսկ եթե հապավումը կազմված է սկզբնատառներից, ապա ամբողջ հապավումն է գրվում մեծատառով. օրինակ՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը=ՍՍՀՄ, Ամերիկյան Միացյալ Նահանգները=ԱՄՆ և այլն։

10. Եթե հապավումը կազմված է հատաբաժ անուններից, ամբողջությամբ գրվում է փոքրատառով. օրինակ՝ բարձրագույն ուսումնական հիմնարկ=բուհ։

ը) ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Քանակական թվականներից երկանիշ թվերը (11, 12, 13 . . . . 25 . . . . 36 . . . 47 . . 58 . . . . 64 . . 79 . . 99) գրվում են միասին, իսկ ավելի բարձր թվերը՝ առանձին. օրինակ՝ **երեսունվեց, երեսունչորս, ութսունչորս, հարյուրհիսունվեց** և այլն։

Բայց՝ **երկու հարյուր, երեք հազար, հինգ միլիոն, տասը հազար հինգ հարյուր վաթսունմեկ**։

2. *Բառավերջում* **ը** *ունենում են միայն* **երեք** *և* **տասը** *բառերը, վեց, յոթ, ութ գրվում են առանց* **ը**-*ի*։

3. *Դասական թվականներից* **երկու, երեք** *և* **չորս** *բառերն ունենում են* **երորդ** *ածանցը, իսկ մյուս բոլորը՝* **երորդ** *ածանցը. օրինակ՝* **երկրորդ, երորդ, չորրորդ, հինգերորդ, տասներորդ, ութերորդ, հարյուրերորդ, երեսուներորդ, երեսուներեքերորդ, հարյուրերորդ** և այլն։ *Այսպես կանոնի հետևանքով* **երորդ** և **չորրորդ** *բառերն ունենում են երկու* **ր**։

4. *Կոտորակային թվի համարիչը գրվում է առանձին, իսկ հայտարարը՝ առանձին, օրինակ՝* **հինգ տասնորդական, երկու հարյուրերորդական, քառասուներեք հազարերորդական** և այլն։

ՄԵԾԱՏԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

«Մեծատառով են սկսվում՝

1. Անկախ նախադասությունը, օրինակ՝

Գյուղացի Հաճըոյի տունը կռիվ էր ընկել։

2. Ուրիշի ուղղակի խոսքը, երբ նա առնվում է չակերտների մեջ. օրինակ՝ Մեսրոպն ասաց.

«Պղուբ ժամանակ չպետք է կորցնել, պետք է սկսել պարապմունքը»։

3. Առանձնաորեն յուրաքանչյուր տողը. օրինակ՝

«Հե՛յ Ջան, հայրենիք, ինչքան սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մովի մեջ»։

4. Երկրորդ դեմքի դերանունը, որպես քաղաքավարության ձև. օրինակ՝

Սասցո Ջեր նամակը։

5. Գրքերի վերնագրերը. օրինակ՝

Նար-Դոսի «Մահը» վեպը։

6. Չակերտների մեջ առնված արտադրական, արտելային և այլ հասարակությունների անունները. օրինակ՝

«Դեպի կոմունա» արտել, «Արշալույս» կոլտնտեսություն և այլն։

7. Անձնանունները, հայրանունները և ազգանունները. օրինակ՝

Գևորգ, Համլիկ, Աշոտ Աբրամի Կարապետյան և այլն։

Ծանոթ.—1. Եթե անձնանունների հոդնակին գոյ է ածվում հասարակ լմաստով, սկսվում է փոքրատառով, օրինակ՝ Մենք այժմ սասկանովներ շատ ունենք։

Ծանոթ.—2. Եթե անձնանունների հոդնակին նշանա-

կում է տոմս, ընտանիք կամ ամուսնական զույգ, սկըսվում է մեծատառով. օրինակ՝ այսօր մեզ մոտ հյուր էին Հարությունյանները։ Սամվելը Մամիկոնյաններից էր։

8. Բոլոր հատուկ անուններըն. ըստ որում հատուկ անուն ևն կոչվում՝ մի առարկային տրվող անունը մյուսներից տարբերելու համար։ Հատուկ անուններ են՝ անձնանուններըն, կենդանիներին տրվող անուններըն, աշխարհագրական անուններըն, պետություններն, երկրներն, հնություններն, կազմակերպություններն, հաստատություններն ու հասարակական միավորումների անուններըն, նույնպես և հասարակական երևույթների անուններըն։

Դաշնր.—1. Եթե հատուկ անունը բաղադրյալ է, մեծատառով սկսվում է։

